ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am, jrvezh.kotayk@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» հոկտեմբերի 2026 թվականի N 1764-Ա

ՍԵՎԱԿ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1. Սևակ Մուրադյանին տալ նկուղային հարկով երկհարկանի բնակելի տան և պարիսպի կառուցման շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի Մուշ այգեգործական թաղամասի 2-րդ փողոցի թիվ 8 հասցեի հողամասում՝ համաձայն հաստատված նախագծային փաստաթղթերի:

2. Կառուցվող շենքերի և շինությունների սպասարկման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների իրականացումը կատարվում են բացառապես կառուցապատողի միջոցների հաշվին:

3. Պարտավորեցնել Սևակ Մուրադյանին՝ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2026 թ. հոկտեմբերի 12
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am, jrvezh.kotayk@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» հոկտեմբերի 2026 թվականի N 1763-Ա

ԳՐԵՏԱ ՀՐԱՆՏԻ ԱՎԱԳԻՄՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ջրվեժ համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Քաղաքացի Գրետա Հրանտի Ավագիմյանը՝ հանդիսանալով փոխադրամիջոցի գույքահարկ վճարող սուբյեկտ, Հարկային օրենսգրքով սահմանված կարգով չի կատարել Ջրվեժ համայնքի բյուջեի հանդեպ հարկերը վճարելու պարտավորությունը, ինչի կապակցությամբ 2026 թվականի հուլիսի 10-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով և 34-րդ հոդվածով Ջրվեժի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել էր վարչական վարույթ՝ փոխադրամիջոցի գույքահարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով:

Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Համաձայն աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի կողմից 2026 թվականի հոկտեմբերի 12-ին տրված տեղական հարկի պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքի՝ Գրետա Հրանտի Ավագիմյանը Ջրվեժ համայնքի բյուջեի հանդեպ մարել է Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղում հաշվառված փոխադրամիջոցի 2023-2025 թվականների հարկային պարտավորությունները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 50-րդ հոդվածի երկրորդ մասի «ա» կետի համաձայն՝ վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթը կարող է կարճվել, եթե անձը, ում հասցեագրված է լինելու վարչական ակտը, վերացրել է օրենքի կամ իրավական այլ ակտի պահանջների խախտումները կամ պատշաճ միջոցներ է ձեռնարկել խախտումները կանխելու ուղղությամբ և նման դեպքերում օրենքն այդ խախտումների վերաբերյալ չի պահանջում վարչական ակտի ընդունում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 50-րդ հոդվածի երկրորդ մասի «ա» կետով, 53-րդ, 58-60-րդ հոդվածներով, ***որոշում եմ.***

1. Քաղաքացի Գրետա Հրանտի Ավագիմյանի նկատմամբ 2026 թվականի հուլիսի 10-ին հարուցված վարչական վարույթը կարճել:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Ջրվեժ համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

3. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է աշխատակազմի ղեկավար Արմինե Պետրոսյանը:

4. Որոշման մեկ օրինակը եռօրյա ժամկետում հանձնել Գրետա Հրանտի Ավագիմյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2026 թ. հոկտեմբերի 12
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am, jrvezh.kotayk@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«12» հոկտեմբերի 2026 թվականի N 1762-Ա

ՌԱՄԵԼԱ ԱՐՏՅՈՒՇԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2019 թվականի հունվարի 15-ի թիվ 4-Ն որոշմամբ հաստատված չափորոշիչները, Ջրվեժ համայնքի սոցիալական խնդիրների ուսումնասիրման հանձնաժողովի եզրակացությունը Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 3-րդ փողոցի թիվ 28 տան բնակիչ Ռամելա Արտյուշի Պետրոսյանի ընտանիքի վերաբերյալ, այն է՝ Ռամելա Պետրոսյանը, ծնված 1958 թվականին, բնակվում է միայնակ, ունի առողջական խնդիրներ, չի կարողանում տեղաշարժվել, հաշմանդամության 3-րդ կարգի թոշակառու է, չի աշխատում և ֆինանսական ու սոցիալական վիճակից ելնելով Ռամելա Պետրոսյանը դիմել է համայնքապետարան՝ սոցիալական աջակցություն ստանալու խնդրանքով, ***որոշում եմ.***

1.Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Սոնա Հովհաննիսյանին՝ Ռամելա Արտյուշի Պետրոսյանին ցուցաբերել սոցիալական աջակցություն՝ հատկացնելով 30 000 (երեսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի չափով սննդի քարտ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Ռամելա Արտյուշի Պետրոսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2026 թ. հոկտեմբերի 12
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am, jrvezh.kotayk@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» հոկտեմբերի 2026 թվականի N 1761-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմանբ հաստատված կարգի 50-րդ և 53-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով քաղաքացի Տոսուն Հուսոյի Գալոյանի խնդրանքը, ***որոշում եմ.***

1.Տոսուն Հուսոյի Գալոյանին, Գոհար Սաիդի Գալոյանին, Մարինե Տոսունի Գալոյանին և Արթուր Տոսունի Գալոյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Զովք գյուղի 07-030-0010-0005 կադաստրային ծածկագրով գույքին (հիմք՝ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 520141 վկայական, տրված 2003 թվականի մարտի 25-ին) տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Զովք, 13-րդ փողոց, թիվ 1:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Տոսուն Հուսոյի Գալոյանին, Գոհար Սաիդի Գալոյանին, Մարինե Տոսունի Գալոյանին և Արթուր Տոսունի Գալոյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2026 թ. հոկտեմբերի 12
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am, jrvezh.kotayk@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» հոկտեմբերի 2026 թվականի N 1760-Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ***.

1.«Հայաստանի Էլեկտրական Ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը տալ 160 ԿՎԱ հզորության ԿՏԵ-ի տեղադրման, 0.4 ԿՎ ՕԳՄ-ի և 0.22 ԿՎ ՕԳՄ-ի L=106 գծմ երկարությամբ մալուխագծի կառուցման շինարարության թույլտվություն՝ համաձայն հաստատված նախագծային փաստաթղթերի, դեպի Սուրեն Զարգարյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի թիվ 57 հասցեի հողամասի էլեկտրամատակարարումն ապահովելու նպատակով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ «Հայաստանի Էլեկտրական Ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2026 թ. հոկտեմբերի 12
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am, jrvezh.kotayk@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«12» հոկտեմբերի 2026 թվականի N 1759-Ա

ՆԱԻՐԱ ՌԱԶՄԻԿԻ ԱՂԱՋԱՆՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1. Նաիրա Ռազմիկի Աղաջանյանին տալ ջրագծի կառուցման շինարարության թույլտվություն՝ Ջրվեժ համայնքի՝ Ջրվեժ գյուղի 40-րդ փողոցի թիվ 16/2 հասցեի և համատեղ 4 հասցեների հողամասերում ջրամատակարարումն ապահովելու նպատակով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Նաիրա Ռազմիկի Աղաջանյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2026 թ. հոկտեմբերի 12
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am, jrvezh.kotayk@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» հոկտեմբերի 2026 թվականի N 1758-Ա

ՀԱՅԿ, ՍԵԴՐԱԿ ԵՐԶՆԿՅԱՆՆԵՐԻՆ ԵՎ ՆԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի 124-րդ կետով, ***որոշում եմ.***

1.Թույլատրել Հայկ, Սեդրակ Երզնկյաններին և Նարինե Մանուկյանին՝ շարունակելու ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով իրենց պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 191-րդ թաղամասի թիվ 20 հասցեի հողամասում 2023 թվականի հուլիսի 26-ի թիվ 162 շինարարության թույլտվությամբ տրված կիսանկուղային հարկով երկհարկանի բնակելի տան կառուցման և պարսպապատման շինարարական աշխատանքները՝ համաձայն հաստատված նախագծային փաստաթղթերի և շինարարության թույլտվության ժամկետը երկարացնել մինչև 2027 թվականի ապրիլի 12-ը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Հայկ, Սեդրակ Երզնկյաններին և Նարինե Մանուկյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2026 թ. հոկտեմբերի 12
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am, jrvezh.kotayk@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«09» հոկտեմբերի 2026 թվականի N 1757-Ա

ԱՐԱՔՍՅԱ ԳՈՒԼՅԱՆԻՆ ԵՎ ԱՆԴՐԱՆԻԿ ԱՅՎԱԶՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1. Արաքսյա Գուլյանին և Անդրանիկ Այվազյանին տալ բնակելի տան կառուցման շինարարության թույլտվություն՝ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրենց պատկանող Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 3-րդ թաղամասի 10-րդ փողոցի թիվ 25 հասցեի հողամասում՝ համաձայն հաստատված նախագծային փաստաթղթերի:

2. Կառուցվող շենքերի և շինությունների սպասարկման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների իրականացումը կատարվում են բացառապես կառուցապատողի միջոցների հաշվին:

3. Պարտավորեցնել Արաքսյա Գուլյանին և Անդրանիկ Այվազյանին՝ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2026 թ. հոկտեմբերի 09
գ. Ջրվեժ